19 փետրվարի 2021թ. ք. Երևան

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 442680/16-Վ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 19.02.2021 թվականի թիվ _____ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով թիվ 6411 վարույթը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Ա/Ձ Սարգիս Հուսնյանը /ՀՎՀՀ՝ 64410643 Երևան, Աջափնյակ, Ֆուչիկի փ. 2 6, անձն. տվ.՝ 000470336, ՀԾՀ՝ 2504670293/ ՀՀ Հարկային օրենսգրքի 261-րդ հոդվածով և 156-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2020 թվականի 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի և 2020 թվականի սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկները, որոնց համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով:

Վարչական վարույթի շրջանակներում Սարգիս Հուսնյանին հասցեագրվել է ծանուցագիր՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու վերաբերյալ: Նկատի ունենալով, որ ծանուցագիրը ստանալու փաստը հավաստող ապացույց առկա չի եղել, ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 21.12.2020 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի:

Կողմին հայտնաբերելու համար ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չէ առարկություն կամ բացատրություն:

Այն փաստը, որ Սարգիս Հուսնյանի կողմից մեկ տարվա ընթացքում կրկին կատարվել է իրավախախտում, որի համար արդեն ենթարկվել է վարչական տույժի (27.12.2019թ. թիվ 403531/16 որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ, 244[2], 281 հոդվածներովև 282 հոդվածի 1-ինմասի 1-ինկետով,«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով

ՈՐՈՇԵՑԻ

1. Սարգիս Հուսնյանի վերաբերյալ հարուցված թիվ վարչական վարույթը վերսկսել:
2. Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 2-րդ մասով՝ Սարգիս Հուսնյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20.000 (քսան հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարներին.
900005240487, վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը վճարելու